ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ «ԴԻՆԱՄՈ» ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Հաշվի առնելով, որ Կողմերն ընդունում են սպորտի ոլորտում փոխադարձ համագործակցությունը

Կարևորելով հետաքրքրության բարձրացումը տարբեր մարզաձևերի նկատմամբ, ինչպես նաև դրա իրականացման համար պայմանների ստեղծումը

Վստահություն հայտնելով, որ համագործակցությունը կնպաստի մարզական-սպորտային և գիտական փորձի փոխանակման ու աջակցության ցուցաբերմանը

Ընդունելով Կողմերի պատրաստակամությունը համատեղ կրթական, մարզական միջոցառումների իրականացման համատեքստում.

Հիմք ընդունելով սույն հուշագիրը և փոխադարձ պայմանավորվածությունները.

Կողմերը համաձայնեցին հետևյալի շուրջ

1. Համագործակցության նպատակը

Սույն հուշագրով Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2. Համագործակցության ուղղությունները

2.1 Սույն հուշագրով «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը (այսուհետ՝ **Ինստիտուտ**) և Հայաստանի «Դինամո» մարզական հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ **Կազմակերպություն**) պատրաստակամ են.

2.1.1 Փոխադարձ աջակցություն ցուցաբերել մարզական, կրթամարզական միջոցառումների կազմակերպման և իրականացման համատեքստում

2.1.2 համագործակցել նորարական, դրամաշնորհային ծրագրերի համատեղ իրականացման շուրջ

2.1.3 ըստ աշխատանքային անհրաժեշտության, օգտագործել տնօրինության տակ գտնվող տարածքները և գույքը,

2.1.4 Ինստիտուտի կրթական ծրագրերի մշակման աշխատանքներում,

2.1.5 նորարարական ծրագրերի համատեղ իրականացման շուրջ,

2.1.6 սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպման միջոցով,

2.1.7 Կողմերի գործունեությանն առնչվող համապատասխան նյութերի հրատարակման գործում,

2.1.8 երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ուսումնամարզական և մարզական բնույթի ծրագրերի, այդ թվում՝ համապատասխան ոլորտներում հետազոտությունների, փորձաքննությունների իրականացման միջոցով,

2.1.9 համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն հայցելու և ստանալու շուրջ:

3. Համագործակցության սկզբունքները

Կողմերը սույն հուշագրի սահմաններում իրենց գործառույթներն իրականացնում են օրինականության, փոխօգնության, համագործակցության սկզբունքներով:

4. Եզրափակիչ դրութեր

4.1 Սույն հուշագիրը կնքվում է երկու օրինակից հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4.2 Սույն հուշագրի լրացումներն ու փոփոխությունները համարվում են հուշագրի անբաժանելի մասը:

4.3 Սույն հուշագիրը չի առաջացնում ֆինանսական պարտավորություններ Կողմերի համար:

4.4 Յուրաքանչյուր Կողմ կարող է միակողմանիորեն խզել հուշագիրը՝ այդ մասին մեկ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս կողմին:

4.5 Սույն հուշագիրը կնքվել է Երևան քաղաքում, 2023 թ. փետրվարի –ին:

4.6 Սույն հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում անժամկետ:

5" Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Ինստիտուտ	**Կազմակերպություն**
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ	Հայաստանի «Դինամո» մարզական հասարակական կազմակերպություն
ք. Երևան, Ալեք Մանուկյան 11	ք. Երևան, Վարդանանց 69շ"
Ռեկտոր՝ Դավիթ Խիթարյան	Նախագահ՝ Արամ Հովհաննիսյան
Կ.Տ. _____ (ստորագրություն)	Կ.Տ. _____ (ստորագրություն)